ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարար, Ռուստամ Բադասյանի, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Քրիստիննե Գրիգորյանի, և Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանի՝ Իտալիայի Հանրապետություն (Վենետիկ) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձիք՝ Ռուստամ Բադասյան, Քրիստիննե Գրիգորյան և Եղիշե Կիրակոսյան:

Գործուղվող անձանց զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարար, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ և Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Իտալիայի Հանրապետություն (Վենետիկ), 2019 թվականի հոկտեմբերի 10-12-ը:

Հրավիրող կողմը՝ «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողով (Վենետիկի հանձնաժողով):

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) 120-րդ լիագումար նիստին:

Քննարկված թեմաները՝ «ՀՀ Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում և հարակից օրենքների փաթեթում նախաձեռնված փոփոխությունների, ինչպես նաև «Կանանց նկատմամբ և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» ԵԽ կոնվենցիայի սահմանադրական ազդեցության վերաբերյալ տրամադրվող փորձագիտական կարծիքների հաստատմանն առնչվող հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

ՀՀ արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանը, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Քրիստիննե Գրիգորյանը, Մարդու

իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանը 2019թ. հոկտեմբերի 10-ից 12-ը Իտալիայի Հանրապետությունում (Վենետիկ) մասնակցել են «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) 120-րդ լիագումար նիստին:

ՀՀ արդարադատության նախարարությունը ս.թ. սեպտեմբերին Վենետիկի հանձնաժողովի փորձագիտական եզրակացությունը ստանալու նպատակով Հանձնաժողովին է ներկայացրել «ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և հարակից օրենքների նախագծերի փաթեթը: Ս.թ. սեպտեմբերի 16-ից 17-ը Հայաստան է ժամանել Վենետիկի հանձնաժողովի պատվիրակությունը՝ շահագրգիռ մարմինների հետ քննարկումներ ունենալու նպատակով: Պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել Բարձրագույն դատական խորհրդի, Վճռաբեկ դատարանի, Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի, Սահմանադրական դատարանի, Ազգային ժողովի, ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչների հետ:

Բացի այս Արդարադատության նախարարը Վենետիկի հանձնաժողովին ուղղված մեկ այլ դիմումով կարծիք էր խնդրել ՀՀ Սահմանադրության տեսանկյունից «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (Ստամբուլյան կոնվենցիա) վավերացման ազդեցության վերաբերյալ:

Վենետիկի հանձնաժողովի 120-րդ լիագումար նիստի ընթացքում երկու կարծիքներով զեկուցողները Հանձնաժողովին ներկայացրել են կազմված կարծիքների նախագծերը, ներկայացրել իրավիճակային համատեքստը, այնուհետ Հանձնաժողովի անդամների միջև տեղի է ունեցել մտքերի փոխանակություն:

Լիագումարի նիստի ընթացքում ելույթ է ունեցել Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղար Մարիա Պեյչինովիչ Բուրիչը, ինչպես նաև Եվրոպական հարևանության քաղաքականության և ընդլայնման հարցերով հանձնակատար Յոհաննես Հաանը:

Մարիա Պեյչինովիչ Բուրիչը նշել է, որ Կոնվենցիայի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից պատրաստված կարծիքը շատ կարևոր է բոլոր անդամ պետությունների համար՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հանձնաժողովը Եվրոպայի խորհրդի սահմանադրական հարցերով անկողմնակալ մասնագիտական կարծիք տրամադրող կառույց է:

Հանձնաժողովի առջև ելույթ ունենալով՝ Եվրոպական Միության Եվրոպական հարևանության քաղաքականության և ընդլայնման հարցերով հանձնակատար Յոհաննես Հաանը ողջունել ու Հանձնաժողովի ուշադրությունն է հրավիրել, որ ՀՀ-ում դատական և իրավական բարեփոխումների մշակմանը ներգրավված է նաև Եվրոպական միությունը և ուրախությամբ նշել, որ այդ ռեֆորմները, հիմք ընդունելով եվրոպական ստանդարտները, միտված են դատական համակարգի անկախությունն ապահովելուն:

Վենետիկի հանձնաժողովի 120-րդ լիագումար նիստի ընթացքում ելույթով հանդես է եկել նաև ՀՀ արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանը: Իր ելույթում ՀՀ արդարադատության նախարարը իր գոհունակությունն է հայտնել Հանձնաժողովին և ԵԽ Գլխավոր տնօրինությանը Հայաստանի կառավարության հետ ակտիվ և արդյունավետ համագործակցության և կարծիքների տրամադրման համար:

Նախարար Բադասյանը Հանձնաժողովին տեղեկացրել է դատահիրավական բրեփոխումների ոլորտում ՀՀ կողմից իրականացված և նախատեսվող միջոցառումների օրակարգի մասին՝ նշելով, որ 2019թ. հոկտեմբերի 10-ին ՀՀ կառավարության կողմից հաստատվել է Դատական և իրավական բարեփոխումների ռազմավարությունն ու Գործողությունների ծրագիրը, իսկ ս.թ. հոկտեմբերի 3-ի ՀՀ կառավարության թիվ 1332-Ն որոշմամբ հաստատվել է նաև Հակակոռուպցիոն ռազմավարությունն ու դրա գործողությունների ծրագիրը:

ՀՀ արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանը շեշտել է, որ նախարարության համար կարևոր է, որ Հանձնաժողովը միանշանակ դրական է գնահատել ձեռնարկված բարեփոխումների օրակարգը: Անդրադառնալով դատական օրենսգրքի փոփոխությունների փաթեթի առնչությամբ կարծիքին՝ ՀՀ արդարադատության նախարարը նշել է, որ փոփոխությունները միտված են դատավորների անկողմնակալության առավել բարձր մակարդակի ապահովմանը և կիրառման մեջ դրանք ավելի արդյունավետ կլինեն կոռուպցիայի դեմ պայքարում: Այնուհետ նախարարը պատասխանել է Հանձնաժողովականների հարցերին:

Վենետիկի հանձնաժողովը, ամփոփելով «ՀՀ Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում և հարակից օրենքների փաթեթում նախաձեռնված փոփոխությունների վերաբերյալ փորձագիտական կարծիքը, նշել է, որ Նախարարության կողմից մշակված դատական օրենսգրքի փաթեթը գովեստի է արժանի, բացի այդ, նախագիծը մշակելիս Կառավարությունը գործել է պատասխանատու և համակողմանի՝ նախագիծը քննարկելով թե՛ ներպետական շահառուների և թե՛ միջազգային գործընկերների հետ:

Վենետիկի հանձնաժողովի 120-րդ լիագումար նիստին հաստատվել են «ՀՀ Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում և հարակից օրենքների փաթեթում նախաձեռնված փոփոխությունների, ինչպես նաև «Կանանց նկատմամբ և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» ԵԽ կոնվենցիայի վավերացման սահմանադրական ազդեցության վերաբերյալ կարծիքները:

Հարգանքով, ՀՀ արդարադատության
նախարար՝

Ռուստամ Բադասյան

16 հոկտեմբեր 2019թ.